ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Մ.

Գլոբալացումը XXI դ. սկզբին ողջ մարդկությանը և քաղաքակրթությանը առաջադրեց նոր մարտահրավերներ: Դա է պատճառը, որ շատ մասնագետներ գլոբալացումը չեն դիտում որպես միայն տնտեսական նշանակության երևույթ, այլ դիտարկում են նաև միջազգային քաղաքականության, մշակույթի, սոցիալական խնդիրների դիրքերից: Որոշ հետազոտողներ գլոբալացումը նույնիսկ կապում են մարդկության պատմության սկզբի հետ և դրան են վերագրում առաջին արտադրական հաջողությունները[1]: Այս երևույթը բազմակողմանի է և ինքնին դառնում է ամենատարբեր գիտությունների ուսումնասիրման օբյեկտ: Ամենից առաջ այն օբյեկտիվ գործընթաց է, հատկապես պատմական տեսանկյունից, և ինտեգրում է այն բոլոր օրինաչափությունները, ձևերը, որոնք ժամանակի ընթացքում դրսևորվել են:

Ուսումնասիրելով գլոբալացման գործընթացը՝ Է. Ազրոյանցը կարծում է, որ այն պատմական զարգացման վեկտոր է, որը հետագայում պայմանավորում է ինչպես ռեսուրսների, այնպես էլ աշխատուժի հետագա շարժը: Նման բնութագրման դեպքում գլոբալացման գործընթացը ստանում է պատմական իմաստ[2]: Նա մարդկությունը դիտարկում է որպես երկրագնդի բնակչության գլոբալ, սահմանային ամբողջություն: Երկիրը որպես կենսատարածք ի սկզբանե փոխկապակցում է մարդկանց, և դա արդեն գլոբալացման սկիզբն է: Միաժամանակ, այն դառնում է մարդու կենսագործունեության, հասարակական արտադրության հիմքը, այսինքն՝ պայմանավորում է բնություն-հասարակություն փոխազդեցությունը: Այսպիսով, հասարակության զարգացմանը զուգընթաց աստիճանաբար մեծանում են փոխկախվածությունը ինչպես տարբեր հասարակությունների, այնպես էլ մյուս տնտեսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները:

Ելնելով տնտեսական ռեսուրսների անհավասարաչափ բաշխման հանգամանքից՝ Ազրոյանցը եզրակացնում է, որ գնալով խորանում է հակասությունը այդ ռեսուրսները տիրապետողների և հնարավոր օգտագործողների միջև: Կան երկրներ, որոնք «ավանդական» են իրենց ավելցուկային աշխատուժով, և կան երկրներ, որ հարուստ են բնական հանածոներով:

XXI դարը բնութագրվում է հենց այդ հակասություններով, որոնք ժամանակակից հասարակագիտությունում ստանում են հայեցակարգային նշանակություն: Է. Ազրոյանցի «էվոլյուցիոն տեսությունը»՝ որպես

---

[1] Տե՛ս **Азроянц Э. А.,** *Глобализация как процесс (Материалы постоянно действующего междисциплинарного семинара, М., 2001, с. 4-7).*

[2] Նույն տեղում, էջ 5:

«ամբողջական աշխարհի մասին պատկերացում», աշխատուժի միջազգային միգրացիայի (ԱԱՄ) ուսումնասիրման, հատկապես կառուցվածքային գործառնական վերլուծության տեսանկյունից ունի որոշակի հետաքրքրություն:

Ժամանակակից հասարակությունը, չնայած տեխնոլոգիական նվաճումներին, գնալով կախվածություն է ձեռք բերում բնական գործընթացներից, նույնիսկ ավելին՝ որոշակի դեպքերում դառնում է ավելի խոցելի, քան հետարդյունաբերական հասարակությունը: Բանն այն է, որ ժամանակակից գլոբալացումը տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային կապերի միջև ստեղծում է ամուր փոխկապվածություն որոշակի ժամանակի և տարածության մեջ: Դա հատկապես դրսևորվում է միջազգային միգրացիոն գործընթացներում: Դրա հետ մեկտեղ, եթե XXI դ. կեսին մարդկային արժեքների համակարգը ձևավորվում էր աստիճանաբար և հիմնականում համապատասխանում տվյալ էթնոսի կենսապայմաններին ու նրա կողմից կիրառվող տեխնոլոգիային, ապա այժմ տեխնիկան և տեխնոլոգիան ներդրվում են անկախ տվյալ հասարակությունում գործող արժեքային կողմնորոշիչներից՝ դրանով իսկ ներկայացնելով համաշխարհային ներդրողների տնտեսական շահերը[3]:

Հայեցակարգային առումով համաշխարհային տնտեսական զարգացման նպատակը Մարդն է՝ իր պահանջմունքներով: Ընդհանուր զարգացման գործընթացում որևէ երկիր ձգտում է ամենից առաջ բավարարել իր ազգի պահանջմունքները, և դա առաջին հայացքից չի հակասում համաշխարհային զարգացման նպատակին: Բայց եթե հաշվի առնենք ազգային շահերի առկայությունը, ռեսուրսների օգտագործման տարբեր հնարավորությունները և այն հանգամանքը, որ աշխարհը զարգանում է անհավասարաչափ, ակնհայտ են դառնում համաշխարհային տնտեսությունում օրեցօր աճող հակասությունները, այդ թվում և միջազգային միգրացիոն հոսքերի ինտենսիվացումը, հատկապես XX դ. երկրորդ կեսից: Դրանից ելնելով՝ որոշ հեղինակներ, վերլուծելով գլոբալացման տնտեսական հայեցակետերը, փորձեցին հիմնավորել *աշխատուժի գլոբալ շուկա և գլոբալ աշխատուժ* հասկացությունները[4]: Կարծում ենք, որ այդպիսի մեխանիկական փոխկապակցումը գործնականում խեղաթյուրված է: Այն դեպքում, երբ փոխատվական կապիտալը խիստ ազատ է և շարժունակ ֆինանսական ցանցերի էլեկտրոնային շղթաներում, աշխատուժի շարժը մնում է ու դեռևս կմնա խիստ սահմանափակված տարբեր երկրների այն ինստիտուտների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում տվյալ ազգի տնտեսական անվտանգության համար:

Բավական է նշել, որ գլոբալ աշխատուժի (մոտ 100 մլն.) ընդամենը 1,8%-ն է աշխատում իր երկրի սահմաններից դուրս: Չնայած Եվրոմիության, մասնակից երկրների միջև բազմաթիվ համաձայնագրերին,

---

[3] Տե՛ս **Бек. У.,** *Общество риска: на пути к другому модерну, М., 2000, с. 99.*

[4] Տե՛ս *Глобализация и устойчивое развитие:проблемное поле и возможные сценарии (Материалы постоянно действующего междисциплинарного семинара клуба ученых "Глобальный мир", М., 2001, с. 21);* **Gray. J.,** *False Dawn: The Delusions of Global Capita lism, L., 1998, p. 80.*

2000 թ. քաղաքացիների ընդամենը 2,2%-ն էր աշխատում արտերկրում[5]: Ընդ որում, հետաքրքիր է այն հանգամանքը, որ Եվրոմիության անդամների թվի ավելացմանը զուգընթաց, գնալով խստանում են իմիգրացիոն և էմիգրացիոն պահանջները այդ երկրների միջև:

Սառը պատերազմի ավարտը թույլ տվեց տնտեսական նոր իրողություններին մոտենալ որակական նոր մակարդակով: Արդեն 1970-ականին գլոբալացման որակական փոփոխությունները երկրորդ պլան մղեցին սոցիալական և տնտեսական այն հիմնախնդիրները, որոնք ծագել էին դեռևս 1950-1960-ական թթ.: Այս հանգամանքն էլ պատճառ դարձավ միջազգային միգրացիոն գործընթացների ինտենսիվացմանը: Մասնավորապես, հսկայական թվով հոսքեր, հիմնականում երիտասարդ տարիքի մարդկանց, ուղղվեցին դեպի Գերմանիա, հատկապես Թուրքիայից և հարավային Եվրոպայի երկրներից: Բավական ինտենսիվ էին միգրացիոն հոսքերը Ֆրանսիայի նախկին գաղութային երկրներից:

Իրական եկամուտների բարձրացմանը զուգընթաց՝ խիստ կրճատվեց «սև» աշխատանքով զբաղվողների թվաքանակը վերոնշյալ երկրներում: Դրա հետ մեկտեղ, շատ կարճ ժամանակահատվածում փոխվեց նաև ժողովրդագրական իրավիճակը (բարձրացավ ծնելիությունը, իջավ մահացությունը, ավելացան խառն ամուսնությունները): Միաժամանակ, Եվրոմիության և այլ խոշոր միջազգային կազմակերպությունների կազմավորմանը զուգընթաց, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրների միջև աշխատուժի միջազգային շարժին նպաստելու և կարգավորելու տեսանկյունից: Դրան նպաստեցին երկու կարևոր հանգամանք՝

1. Համաշխարհային տնտեսությունում ներճյուղային կոոպերացիայի զարգացումը, որն օբյեկտիվորեն բարձրացրեց վերազգային գործոնների դերը կառուցվածքային փոփոխություններում:

2. Արագ թափով սկսվեց չվերահսկվող կարճաժամկետ վերազգային կապիտալի կուտակումը, որը, շատ կարճ ժամանակահատվածում բավարարելով ազգային տնտեսության ընթացիկ պահանջարկը, դուրս եկավ ազգային սահմաններից: Դրա հետևանքով սկսեցին նվազել տվյալ երկրի իրական եկամուտները, որն էլ հետագայում աշխատուժի արտագաղթի պատճառ է դառնում:

Հարկ է նշել, որ աշխատուժի բարձր շարժունակության հիմնադրույթը պարտադիր չէ զուգակցել գլոբալացման գործընթացների հետ: Ակնհայտ է այն փաստը, որ իմիգրացիոն օրենսդրական պայմանների պարբերական խստացումը շատ դեպքերում խորացնում է հակասությունը տնտեսապես զարգացած և զարգացող երկրների միջև: Զարգացող երկրներում ժողովրդագրական դինամիկայի տեմպերը զգալիորեն գերազանցում են տնտեսական աճի տեմպերին: Այս հանգամանքը արդեն 1960-1970-ականներին առաջ բերեց անօրինական միգրացիայի ծավալների մեծացում: Դա, որպես կանոն, պայմանավորված էր զբաղվածության ոլորտի պետական կարգավորման բացակայությամբ և ստվերային տնտեսության աճով: Այս հանգամանքն ավելի ցայտուն դրսևորվեց ԽՍՀՄ-ի փլուզմամբ: Ստվերային տնտեսությունը, ներառյալ թաքնված և քրեական ոլորտները,

[5] Տե՛ս **Johnston F.,** *The Modern Mobility of International Labor Forces, N. Y., 2002, p. 35-36.*

հետզհետե աճող պահանջներ է առաջադրում անօրինական միգրանտներին՝ նրանց ուղղելով դեպի առավել անբարենպաստ, ստորակարգ աշխատատեղեր:

Այդ իսկ պատճառով, ինչպես արևմտյան, այնպես էլ հայրենական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվում միգրացիոն գործընթացների վերլուծությանը՝ ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական մակարդակներով: Կարելի է ասել, որ ժամանակակից միգրացիոն հոսքերի քարտեզն այսօր ունի որակական նոր բնույթ: Եթե մինչև II համաշխարհային պատերազմը գերակշռում էր, այսպես կոչված, անվերադարձ միգրացիան, որն ի դեպ, բացառիկ դեր ունեցավ ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի ժողովրդագրական փոփոխությունների մեջ, ապա արդեն XX դ. II կեսին այն հսկայական նշանակություն ունեցավ հյուսիսային Եվրոպայի երկրների համար:

XX դ. 60-ական թվականներից զանգվածային բնույթ ստացած միջպետական աշխատանքային միգրացիան դարձել է պետությունների արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական բաղկացուցիչը: ՄԱԿ-ի գնահատմամբ, այսօր յուրաքանչյուր 35–րդ բնակիչը միգրացիայի սուբյեկտ է: Ներգաղթողների և նրանց սերունդների տեսանելի մասը հիմնականում կենտրոնանում է աշխարհի որոշակի տարածաշրջաններում և խոշորագույն քաղաքներում: Դրա հետևանքով արդեն 1990-ականին էթնիկական և մշակութային տարասեռությունը դարձավ Եվրոպայի, ինչպես նաև ԱՄՆ-ի սոցիալական խոշոր հիմնախնդիրներից մեկը: Սակայն դա չի նշանակում, որ աշխատանքի շուկան ընդհանրապես դարձել է գլոբալ: Մենք համակարծիք ենք այն հեղինակների հետ, որ իսկապես գոյություն ունի աշխատուժի գլոբալ շուկա, սակայն այն խիստ հատվածավորված է, այսինքն՝ ընդգրկում է լավագույն մասնագետներ՝ ինժեներներ, տեխնոլոգներ, բժիշկներ[6]: Այսպիսով, բարձրագույն որակավորում ունեցող լավագույն մասնագետների միջև մրցակցությունը աշխատուժի գլոբալ շուկայում կարող է տեղի ունենալ միայն տվյալ մասնագիտության հատվածի ներսում, և անօրինական միգրացիայի հոսքի ուժգնությունը չի կարող ազդել նրանց աշխատուժի գնի վրա:

Թերևս վերը նշված և հատկապես մարդկային գործոններով է պայմանավորված ԱՄՄ-ի նկատմամբ աճող հետաքրքրությունը գիտական շրջանակներում:

Գլոբալացումը՝ որպես երևույթ, իր սկզբունքային նշանակությունը ձեռք բերեց շուկայական տնտեսության գործառման մեխանիզմում՝ միաժամանակ զգալիորեն ուժեղացնելով մարդկային գործոնի դերը: Դեռևս 1960-ական թվականների առաջին կեսին Միացյալ Նահանգներում երևան եկավ «մարդկային կապիտալի» մասին տեսությունը, որն ամբողջական տեսք ստացավ Հ. Բեքերի «Մարդկային կապիտալ» աշխատությունում (1964): Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից

---

[6] Տես, **Coyen L.,** *Social Satisfaction in a Mexican Sending Community.The Effect of Migration to the USA, Social Problems, N. Y., 2002, p. 301, Piory 92 Greenwood, 1990. Some Aspects of International Migration, N. Y., 1994, p. 37-40,* Թադևոսյան Զ., Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցության տեսական գնահատականները, տնտեսություն և հասարակություն 8-9 մայիս, հունիս, Ե., 2005, էջ 143-145:

հետո ամերիկյան տնտեսությունը հարաբերականորեն թույլ էր ինտեգրված աշխարհատնտեսական հարաբերությունների համակարգում, և երկրի շուկայական տնտեսությունը գրեթե ամբողջությամբ ներկայանում էր որպես փակ և շատ դեպքերում ինքնուրույն տնտեսական օրգանիզմ՝ ուղղված ներքին շուկայի զարգացմանը և ներքին պահանջմունքների բավարարմանը: Այսպիսի համակարգի շրջանակներում աշխատանքի վարձատրության տարբերակումը, պայմանավորված կրթության և պրոֆեսիոնալ որակավորման մակարդակով, ինչպես նաև աշխատանքային ստաժով, մեծապես նպաստեց «մարդկային կապիտալի» կուտակմանը: Համապատասխանաբար, շուկան էլ այն ժամանակ ամենից առաջ զուգորդվում էր հարաբերականորեն կայուն աշխատատեղերի պաշտոնակարգության հետ, որն ապահովում էր առավելապես որակյալ աշխատուժի ուղղահայաց շարժունակությունը և, դրանով պայմանավորված՝ ֆիզիկական կապիտալի կուտակման դինամիկայի հետ: Հետագայում այդ տեսությունը զգալի դեր խաղաց գլոբալացման դարաշրջանում ժողովրդագրական գործընթացների հետազոտություններում:

Գլոբալացումը հանգեցրեց այն բանին, որ շուկան դարձավ բաց տնտեսական համակարգի ձևավորման «շարժիչը», որտեղ տնտեսական հարաբերությունների և փոխկապակցությունների սովորական ձևերը կրեցին արմատական փոփոխություններ: Մասնավորապես, «մարդկային կապիտալի» նկատմամբ գլոբալացող տնտեսությունը և դրա որակական-կառուցվածքային էվոլյուցիան հաճախ ունեցան ձևախեղումներ, քանի որ սկսվեց բարձր որակավորման կադրերի ներհոսքը «ոսկե միլիարդի» երկրներ: Ինչպես արդարացիորեն փաստում է Ա. Մակարյանը, «ուղեղների հոսքը» և բարձր որակավորման մասնագետների միջպետական միգրացիան ժամանակակից աշխատանքային շուկայի տիպիկ բնութագիրն են[7]: Գլոբալացման այս առանձնահատկությանն ուշադրություն է դարձնում նաև Մ. Չեշկովան. «Գլոբալացումն ունի այնպիսի կառուցվածքային տրամաբանություն իր գործունակային սկզբունքներով, որի հետևանքով չի համադրվում ոչ տնտեսությանը, ոչ մշակույթին, ոչ միջպետական և սոցիալական կազմավորումներին, լինեն դրանք հասարակություն կամ համայնք»[8]: Վերլուծելով գլոբալացման ժողովրդագրական հիմնախնդիրները՝ Ա. Մակարյանը գրում է. «Երրորդ հազարամյակում հասարակական գիտակցությունում հաստատվում է այն միտքը, որ ինչ-որ մի բան սարքին չէ վերարտադրողական գործընթացի մեխանիզմում»[9]: Մարդկային ներուժի դերի աճը տնտեսության գլոբալացման պայմաններում, որը վերաբերում է հատկապես նախկին ԽՍՀՄ երկրներին, փաստում է հենց այդ հանգամանքը: Խաթարումները վերարտադրության մեխանիզմում դիտարկվում են որպես «ոսկե միլիարդի» առկայության հետևանք: Այսինքն՝ տնտեսապես զարգացած երկրների բնակչությունը (Հյուսիսային Ամերիկա, Արևմտյան Եվրոպա և Ճապո-

---

[7] **Макарян А. С.,** *Глобализация и человеческий потенциал: демографическое измерение (международный аспект), М., 2003, с. 160.*

[8] **Чешкова М. А.,** *Глобалистика: поиски предмета, М., 2002, с. 13.*

[9] **Макарян А. С.,** նշվ. աշխ., էջ 26:

նիա) հնարավորություն է ստանում համապատասխան ֆինանսական մեխանիզմների օգնությամբ կուտակել որոշակի միջոցներ ի հաշիվ ավելացված արժեքի, որ ստացվում է զարգացող մյուս երկրներից[10]:

«Մարդկային գործոնի», «մարդկային կապիտալի», «մարդկային ներուժի» հիմնախնդիրներն այսօր դիտարկվում են աճող գլոբալ անհավասարության տեսանկյունից: Այս հանգամանքը ակնառու է անցումային շրջանի տնտեսություններում: Մասնավորապես, գլոբալ շուկայի ձևավորման հետևանքներն արտահայտվում են այնպիսի բացասական հասարակական-ժողովրդագրական միտումներում, ինչպիսիք են կենսամակարդակի կտրուկ իջեցումը, կյանքի տևողության կրճատումը, ծնելիության նվազումը և դրանց հետևանքով՝ տվյալ երկրի բնակչության նվազումը, կադրերի որակավորման անկումը, ինչպես նաև մի շարք մասնագիտությունների գծով պրոֆեսիոնալների անբավարարությունը: Ժողովրդագրական իրավիճակը երկրագնդի տարբեր մասերում, վերջին հաշվով, որոշվում է բնակչության վերարտադրության տարբեր մոդելների գործողությամբ: Տնտեսապես զարգացած երկրներում ցածր ծնելիությունը համադրվում է մահացության աճի հետ՝ պայմանավորված «բնակչության ծերացմամբ», որի հետևանքով այդպիսի միտումներն այդ երկրներում (Գերմանիա, Իտալիա) արդեն բերել են բնակչության բացարձակ կրճատմանը: Զարգացող երկրներում մահացության նվազումը զուգահեռ է ծնելիության աճին: Դա տեղ ունի նաև Հայաստանում: Ճիշտ է, ծնելիությունը Հայաստանում աստիճանաբար ավելանում է, սակայն 80-ականի համեմատ հարաբերականորեն կրճատվել է: Վերը նշված երևույթները առավել ցայտուն դիտվում են Ռուսաստանում և ԱՊՀ մի շարք երկրներում: Արդեն XXI դ. սկզբին Ռուսաստանում ձևավորվել են «գերցածր ծնելիություն և գերբարձր մահացություն», ընդ որում, բնակչության բնական աճը այնքան ցածր է, որ իրապես վտանգում է ազգի գոյությունը[11]:

Համաշխարհային տնտեսության կազմավորման հետ մեկտեղ առավել ցայտուն դրսևորվեցին արտադրողական ուժերի բաշխման անհավասարությունը և ժողովրդագրական իրավիճակի ուղղակի ներազդեցությունը աշխատուժի միջազգային հոսքերի ձևավորման ինտենսիվության վրա: Կարելի է ասել, որ աշխատանքային ռեսուրսների համաշխարհային միգրացիայի մասշտաբայնությունը մեր ժամանակների հիմնական առանձնահատկությունն է՝ պայմանավորված նաև տեխնոլոգիական գործընթացների և հաղորդակցության զարգացմամբ: Եթե մինչև 1980-ականը միգրացիոն շարժը հիմնականում ուղղված էր զարգացող երկրներից դեպի տնտեսապես զարգացած երկրներ, ապա այսօր սկսվել են հանդիպակաց գործընթացները, այսինքն՝ տնտեսապես զարգացած երկրներից նկատվում է աշխատուժի շարժ դեպի զարգացող երկրներ: Այնուամենայնիվ, աշխատուժի միգրացիայի գերակայող շարժառիթը մնում է տնտեսական գործոնը, չնայած բավական էական է քաղաքական, ռազմական, կրոնական գործոնների նշանակությունը:

---

[10] Նույն տեղում, էջ 27:

[11] Նույն տեղում, էջ 82:

Բացի այդ, միջազգային միգրացիոն հոսքերի տնտեսական բովանդակության վերլուծության ժամանակ չպետք է անտեսել նաև աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, որը զգալիորեն մեծացնում է դեպի զարգացող երկրներ միգրացիոն հոսքերի ուժգնությունը: Սա ամենից առաջ պայմանավորված է վերազգային կորպորացիաների գործունեությամբ, որն, ըստ էության, կազմակերպում է և կառավարում համաշխարհային արտադրությունը: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված ժամանակակից «վագր երկրների» տնտեսական հաջողությունը: Արժանահիշատակ է այն, որ աշխատուժի միջազգային միգրացիան տարածվում է ոչ միայն խոշոր, այլ նաև փոքր երկրների վրա (Հունաստան, Ալբանիա), ընդ որում, բարձր վարձատրվող մասնագետները հիմնականում վճարվում են այն վարկերի հաշվին, որոնք ստացվում են դոնոր երկրներից:

Այսպիսով, ԱՄՄ-ն հիմնականում պայմանավորված է շարժի ներքին օրինաչափություններով: Իհարկե, աշխատուժի միջազգային միգրացիայի ձևավորման օբյեկտիվ հնարավորությունը տնտեսագիտական գրականության մեջ սովորաբար բացատրվում է աշխատավարձերի տարբերություններով, սակայն դա, չնայած էական, բայց տվյալ հիմնախնդրի ընդամենը մեկ հայեցակետն է: Մյուս հանգամանքը թերևս պայմանավորված է տարբեր երկրներում գործազրկության մակարդակների տարբերություններով: Այդ իսկ պատճառով, այնքան էլ օրինաչափ չէ միգրացիոն շարժերի բացատրությունը՝ պայմանավորված միայն բարձր եկամուտների ստացման ակնկալիքով: Հաճախ խոսք կարող է լինել մեծածավալ միգրացիոն հոսքերի մասին, որոնք ձգտում են ապահովել ապրելակերպի կենսական նվազագույնը (օրինակ՝ Ուզբեկստանից, Տաջիկստանից, Թուրքմենստանից հսկայածավալ հոսքերը դեպի Ռուսաստան): Տրամագծորեն այլ է իրավիճակը տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ առկա են կոնկրետ մասնագիտության նկատմամբ պահանջարկը և կոնկրետ աշխատանքի նկատմամբ վարձատրությունը:

Կարելի է եզրակացնել, որ ժամանակակից պայմաններում աշխատուժի միջազգային միգրացիայի տնտեսական բովանդակությունը, ըստ էության, պայմանավորված է այլընտրանքային այն հնարավորությունների ծավալով, որ տիրապետում է աշխատուժը, որն ընդգրկում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական, կրոնական, մշակութային հայեցակետերի ամբողջությունը: Օրինակ՝ Հայաստանից դեպի Իրան հիմնականում արտագաղթում են բժիշկները, արհեստավորները՝ ԱՄՆ, արվեստագետները՝ մերձբալթյան հանրապետություններ:

Փաստորեն, ԱՄՄ-ի պատճառներից են ոչ միայն տնտեսական, այլ նաև ոչ տնտեսական բնույթի գործոնները: Ինչպես նշեցինք, տնտեսական բնույթի պատճառներից է, ամենից առաջ՝ առանձին երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունը, այլ խոսքով՝ ցածր կենսամակարդակ ունեցող երկրներից շարժը դեպի բարձր կենսամակարդակ ունեցող երկրներ: Բացի գործազրկության մակարդակից, զգալի տնտեսական գործոնի դեր է կատարում նաև ֆիզիկական կապիտալի արտահոսքը:

Վերջին ժամանակներս ԱՄՄ-ն հաճախ դիտարկվում է սոցիալական ցանցերի ծագման տեսանկյունից, որը միավորում է մուտքի և ելքի երկրները: Ժամանակակից հայեցակարգերը, փաստորեն, ընդունում են այն իրողությունը, որ միգրացիան ստեղծում է գաղափարների և սոցիալական փորձի փոխանակում այնքանով, որքանով պարունակում է «փոխանակում» հասկացության բովանդակությունը տնտեսագիտական իրականությունում: Հարազատների, բարեկամների միջև ամուր կապերի պահպանումը, որոնք միմյանցից գտնվում են բավական մեծ հեռավորության վրա, ձևավորում է այնպիսի հանրույթ, որ կարելի է դիտարկել որպես վերազգային օրգանիզմ (*habitus)*: Ժամանակակից միգրանտները բնութագրվում են որպես «վերազգային միգրանտներ», քանի որ նրանք զարգացնում և ամրապնդում են սոցիալական, տնտեսական, քաղաքական, կազամկերպական և կրոնական հարաբերություններ սահմանից դուրս, իսկ նրանց տնտեսական շահերը գտնվում են ինչպես մուտքի, այնպես էլ ելքի երկրում: Վերազգային միգրանտների վերափոխումը ինքնուրույն «ակտորների» գլոբալ աշխարհում բացատրվում է քանակից որակի անցման արդյունքով: ՄԱԿ-ի զեկույցում (2002 թ.), նվիրված միջազգային գաղթերին, նրանց թիվը 175 մլն մարդ էր: Համաշխարհային բանկի տվյալներով, 1998-2003 թթ. պաշտոնապես գրանցված միգրանտների փոխանցումները զարգացող երկրներ հասել են ավելի քան 100 մլրդ դոլարի[12]: Վերազգային կապերը, որոնք իրականացվում են միգրանտների միջազգային միությունների միջոցով, տնտեսագիտական գրականության մեջ սովորաբար նկարագրվում են որպես «հինգ T». տրանսֆերտներ (*transferts*), առևտուր (*trade*), տրանսպորտ (*transport*), հաղորդակցություն (*telecommunication)*, զբոսաշրջություն (*tourism*): Վերազգային պրակտիկան այսօրվա դրությամբ չունի հստակ կառուցվածք: Այդ իսկ պատճառով, այն տնտեսական արդյունքը, որ ստացվում է վերազգային միգրացիայից, չի սահմանափակվում միայն գաղթողների տնտեսական գործունեությամբ: Վերազգայնացման դրսևորման ձևերին են վերաբերում նաև ելքի երկրներում մասնակցությունը քաղաքականությանը, դրամական փոխանցումները, գիտելիքների փոխանցումը, ձեռնարկատիրությունը:

Հայրենիքում տեղի ունեցող քաղաքական գործընթացների հանդեպ սփյուռքի հետաքրքրությունը պահպանվում է բազմաթիվ սերունդներում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կառավարությունը մշակում է քաղաքական գործընթացների լայն ծավալ, որն ուղղված է արտասահմանում մշտապես բնակվողների, ինչպես նաև միգրանտների քաղաքական կողմնորոշումներին: Դա առանձնապես դրսևորվում է ընտրությունների նախաշեմին, երբ հզոր քարոզչություն է տարվում սփյուռքում բնակվող հայրենակիցների քաղաքական դիրքորոշումները ճշգրտելու նպատակով:

Միգրանտների շնորհիվ զարգանում են նաև տրանսպորտային, տեղեկատվական, հաղորդակցության և ֆինանսական գլոբալ ենթակառուցվածքները: Առավել արագ տեմպերով են զարգանում օդային փոխադրումների, հեռախոսային կապի, էթնիկական զբոսաշրջության շուկայա-

[12] *Տե՛ս World Economic Outlook. IMF, Wash., D.C. April, 2005, p. 69.*

կան հատվածները: Գաղթողների զգալի մասը կանոնավոր հաճախում է հայրենիք: Դրա մասին են վկայում Մ. Օրոզկոյի հետազոտությունները[13]:

Այսպիսով, ԱՄՄ-ի տնտեսական բովանդակության հակասականությունը XXI դ. սկզբին դարձել է ոչ միայն տնտեսագետների, քաղաքագետների և փիլիսոփաների ուշադրության առարկան, այլև իր վրա է բևեռել ժողովրդագիրների և նույնիսկ բնական գիտությունների մասնագետների ուշադրությունը: Միգրացիոն հոսքերի վերազգայնացման հայեցակարգի կազմավորումը, մյուս գործոնների աստիճանական ներազդեցության աճը տնտեսականի նկատմամբ վկայում են ԱՄՄ-ի՝ որակապես գլոբալ զարգացման նոր բովանդակության ձևավորման մասին:

ГЛОБАЛИЗАЦИЯ И СУЩНОСТЬ МЕЖДУНАРОДНОЙ ТРУДОВОЙ МИГРАЦИИ

КАРАПЕТЯН А. М.

Резюме

Глобализация как всеобщее явление интегрирует проявляющиеся во времени все социальные, культурные, правовые закономерности и формы в сферу экономики и международной политики.

Начиная с 1970-ых годов качественные изменения глобализации в небывалых размерах стимулировали интенсивность миграционных процессов, что сопровождалось развитием внутриотраслевой кооперации в мировой экономике и накоплением неконтролируемого наднационального капитала.

В настоящее время основным мотивом трудовой миграции остается экономический фактор. При анализе экономической сущности международных миграционных потоков нельзя пренебрегать значением современных технологий на основе международного разделения труда. Сказанное, по сути, обусловено теми альтернативными возможностями, которыми располагает рабочая сила в различных сферах своего применения.

[13] **Orozko M.** *Migration and Development: Integration to the GLobal Economy and Policy Opportunities for Donnors, International Conference on Migrant Remittance, London, October 2003.*